

Սմբատ Բիւրատ
Խմբագրութիւն «Փիիկնիկ», Ի
Աղեքսանդրիա



S. Burat
Rédaction «PUNIG»
Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ

ԱՐՏԱՍԱՆՍԱՆ

Չր. 45
ՍԱՐԵԿԱՆ... 45
ՎԵՑԱՄՍԵՍ 25

Dr. 8
ՍԱՐԵԿԱՆ... 15
ՎԵՑԱՄՍԵՍ 8

ՓԻԻԿՆԻԿ

ԲԱԺՆԵԳԻՆԸ
ԿԱՆՆՈՒԿ Է
Ձեռագիր է՝ չ'դարձուի

4 ՈՎԿԱՍ
ՏՆՔԵԿԱՆ ԲԱՂ. 6
Ազդեր կ'ընդունեն մասնաւոր պայմաններով.

Կը ծախուի 07:4 դրոս ողջի

ՇԱՔԱՐԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Գ. ՏԱՐԻ

21 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1902

Թիի 16

ԱՂԵՐՍԱԳԻՐ ՄԸ

Արիւնոտ տարիներուն մէջ կովկաս ապաստանած մեր թրքահայ հայրենակիցները 23 Սեպտ. 1902 թուականով ֆրանսայի Արտաքին գործերու նախատարութեան, ինչպէս եւ անգլիական կառավարութեան զիմած են աղերսագիրով մը, որուն ընտանիքը «L'essor» էն կը թարգմանենք. Վսեմ. Տէր

Մենք, Թուրքիոյ Հայերս, Օսմ. հպատակ, 1894—1896ին Հայկական մեծ ջարդերուն ատեն գաղթելու ստիպուած եւ Ռուսիոյ ասպնջական հողին վրայ ապաստանած 40-50000 թուով անձեր, կուզանք ներկայ աղերսագրով խնդրել ֆրանսական մեծ ազգին կառավարութենէն, ինչպէս արդէն խնդրած ենք Ամենայն Ռուսաց Վեհ. Կայսրէն, որ հաճին մեզ օգնել ու պաշտպանել մեր ներկայ անուելի ու անտանելի վիճակին մէջ:

Եղեռնագործներ չ'ենք մենք, ո' եւ է ոճիւր մը չ'ենք գործած, այլ միայն ստիպուած էինք թողու մեր բնիկ երկիրը լսկ թշուառութենէն ու ջարդերու վախէն:

Ամբողջ 7 տարի, Ռուսիան մեզի շնորհեց ասպնջականութիւն ու ապաստան, կարելի դարձրնելով մեզի՝ շահելու մեր կեանքն ու Թուրքիա թողուած մեր ընտանիք-

ներունը: Անհուն է մեր երախտագիտութիւնը Վեհ. Նիպոլա Բ. Տարին ու ողբազին հանդէպ մեր աշխատանքին արդիւնքովը թուրք կառավարութեան միշտ վճարեցինք մեր բացակայութեանը մեր ընտանիքներուն վրայ բեռնուած տուրքերը:

Սակայն ա'լ եկաւ հասաւ ժամանակը վերագառնալու մեր ընտանիքները, քանի որ չ'ենք կրնար օգտուիլ ողբ կառավարութեան ազնիւ առաջարկութիւնն ընդունելու, անոր համար որ Թուրքիա մնացած մեր ընտանիքները կարելի չէ Ռուսիա բերուին մեր քով: Ու մեր ապաստանած ուստական գիւղերն ու քաղաքները թողլով՝ այսօր եկած խոնած ենք թրքո-ողբ սահմանազրուելու: Բայց թուրք կառավարութիւնը, որ այս 7 տարուան ընթացքում իր հպատակները նկատած է մեզ ու վճարել տուած՝ բոլոր հարկերը, չը թողուր որ նորէն մեր բնիկ երկիրը մտնենք: Չմեռը կուզայ ու մեր կացութիւնը կը դառնայ խիստ խրղճալի:

Հետեւաբար, կը ստիպուինք դիմել Ճրանասական Հանրապետութեան պաշտպանութեանը ու յանուն մարդկութեան խնդրել նոյն կառավարութենէն որ հաճի մեզի համար բարեխօսել Օսմ. կառավարութեան որ մեզի թոյլ տայ վերագառնալ մեր ընտանիքները, մեր ընտանեաց մէջ ու մշակել մեր դաշտերն ու հողերը:

10|23 Սեպտ. 1902

Թրֆո-Ռուսական սահմանագրուխ
Ռուսիա սպասուանող Հայերեն, Թրֆո-
Ռուսական սահմանագրուխը հաւասխունած-
ներուն ներկայացուցիչները:

(Ստրագրուքիւնի)

Ինչ տխուր հակապատկեր. ան-
դին, Թրֆո-Ռուսական Սահմանագր-
ւուխը, մերկ, անօթի, ձիւներուն մէջ
մահուան ճգնաժամեր կ'անցընէ ստուար
թուով անտերունչ հայ գաղթականու-
թիւն մը, արգելուելով մտնելէ Մայր-
Հայրենիքը. ասդին արտասահման, ա-
զատ երկրի մը մէջ, տեղական անվեր-
ջանալի խնդիրներու մէջ թաղուելու
դատապարտուած է ա՛յս քան կարևոր
և սոււարաթիւ գաղթականութիւն մը:

ՔՐՈՆԻԿ

— ՏԻԱՐ ՄԻՀՐԱՆ ՂԱԶԱՐՈՍԵԱՆ.

Տեղիս Ս. Պօղոս Պետրոս Եկեղեցիին
դպրապետն ու լուսարարապետը, լը-
սած էինք թէ այս կիրակի քահանայ
պիտի ձեռնադրուի. բայց, իրարու կը
հարցընեն, ո՞ր եկեղեցիի վրայ և ո՞ր
ժողովուրդին համար, որովհետև, եթէ
չ'ենք սխալիր, դեռ հազիւ 2 ամիս կայ
Տեղիս Ս. Եկեղեցիին քահանաներուն
թիւը պակսեցընելու համար է որ Արժ.
Տ. Աւետիս Շաղօյեան քահանան տե-
ղափոխուեցաւ Գահիրէ կ'ըսեն:

Գալով ընծայացու անձին ար-
ժանաւորութեանը կամ ոչ-արժանաւո-
րութեանը, այդ փափուկ խնդիրը կրն-
ճռոտած ու բարդութիւններ առած է
ա՛յն աստիճան որ Տեղիս ԼՐԱՔՆԻ Թեր-
թիկը - որ տեղական ազգային պայ-
քարին հանդէպ ուխտեալ սառն լու-
թիւն մը պահեց մինչև վերջը-, այս
անգամ հրապարակի վրայ բերած է
զայն ու լրջօրէն կը ծեծէ:

Գեր. Տ. Յովսէփ Եպիսկոպոս Ս.յ-
վազեանի ուշադրութիւնը պէտք է

դառնայ այս խնդրին վրայ, որուն ան-
հրաժեշտ է փոփագուած ելք մը
տալ, որպէս զի առաջին առնուած
ըլլայ կարգ մը տխուր ու թերևս խիստ
տգեղ միջադէպքերու: Քահանան ժո-
ղովուրդին մարդն է ու անոր համար կը
ձեռնադրուի: Ըսողներ ալ կան թէ
Վսեմ. Աբրահամ Բարթող Պէյի Ս. Թա-
դէոս Բարթողիմէոս մատուռին վրայ
պիտի ձեռնադրուի, հետեւաբար ժողո-
վուրդը բնաւ իրաւունք չունի միջա-
մտելու Տիար Մ. Ղազարոսեանի քա-
հանայացման գործին:

Ասդին քահանայացուին ձեռնա-
դրութիւնը պատրաստող հանրագրու-
թիւն մը տեղիս բնիկներէն նաև ու-
րիշ ազգայնոց 130 ստորագրութիւն-
ներովը ծածկուած է, անդին ուրիշ
հանրագրութիւն մը, այդ ձեռնադրու-
թեան արգելումը պահանջող, հրապա-
րակ ելած է:

Ինչ ընել պէտք է: Սպասել և
յուսալ:

Սակայն դէպքերը կանխեցին. ամ-
սոյս 18ին շաբաթ երեկոյեան ժա-
մերգութեան աւարտումին, ընդդի-
մութեան հանդիպելով, յիշեալ
արարողութիւնը ետ մնաց:

Նոյն գիշերուան տխուր դէպքե-
րուն հետեանքովը կառավարական մի-
ջամտութիւն եղաւ, ու կիրակի առ-
տուն, Թաղ. Խնամակալութեան որո-
շումովը մինչև վաղուան Զորեքչաթի
օրը յետաձգուեցաւ, հրաւիրելով բո-
ղո քարկունները ներկայելու իրենց ա-
ռարկութիւնները:

— Ընդհ. Միքիկը. Երեկ երկու-
շաբթի իրիկուն ժամը Յին Բիրաւիսի
մէջ Ընդհ. Միթիկ մը տեղի ունե-
ցաւ, Եգիպտոսի Ս. Առաջնորդին պաշ-
տօնանկումը ու Տիար Միհրան Ղազա-
րոսեանի քահանայացման խափանումը
պահանջող երկու խնդրագիրներ ստո-
րագրելու համար, մին Կ. Պօլսոյ Ս.

Պատրիարքին, միւսը Տեղիս Վսեմ. Կառավարչին ուղղեալ:

Հաւաքուած բազմութեան թիւը մօտաւորապէս 300ի կը հասնէր:

— «Արմէնիա»ի յարգելի և բազմարդիւն Խմբագիր-Տնօրէնը ՏիարՄկրտիչ Փօրթուգալեան ամսոյս 14ին Երեքշաբթի Մէսաժրիով հասաւ քաղաքս ուր քանի մ'օր մնալէ ետք մեկնեցաւ Գահիրէ, քանի մ'օր ալ հոն մնալու և մինչև ամազուրխ Մարտիլիա վերադառնալու նպատակով:

Յամաք ելնելէ մէկ երկու ժամ ետքը փութաց այցելել «Արախ» տրպարանն ու «Փիւնիկ»ի խմբագրատունը:

Մեր մեծանուն պաշտօնակիցն իր այսքան կարճատե ճամբորդութենէն օգտուելով պիտի ուսումնասիրէ եգիպտահայ գաղթականութեան ազգային, ընկերային, տնտեսական ու մտաւորական կացութիւնը: Կը սիրենք ուրեմն հաւատալ թէ քիչ ատենէն պիտի բազդն ունենանք «Արմէնիա» ի մէջ կարգալու շահեկան, մանաւանդ եգիպտաբնակ հայութիւնը շահագրգռող յօդուածներ:

«Արմէնիա»ի համակրելի Խմբագրին այցելութիւնը բնականաբար պէտք չէ անտարբեր թողու եգիպտահայ երիտասարդութիւնը:

«Անասոյ Ֆրանս» մը, իր հայասիրական քանի մը յօդուածներուն համար թէ՛ Գահիրէի և թէ՛ Աղեքսանդրիոյ Հայոց կողմէն խանդավառ ընդունելութեամբ մ'ողջունուեցաւ անցեալ տարի. Գահիրէն արծաթ կաղամար մը, և Աղեքսանդրիան՝ հայնկարչի մը գեղեցիկ ու գնահատուած ծովանկարը նուիրեցին ֆրանսացի մեծանուն ակադեմականին: Փարաւոնի երկրին այս երկու կարևոր կեդրոններուն մէջ համախառնած նոյն հայութիւնը որ գիտցաւ ա՛յնքան ազնուօրէն պատուել հայասէր օտար մը, տեսնենք թէ ի՛նչ

պիտի նուիրէ ազգային վերակենդանութեան համար նախ դպրոցով, ապա մամուլով ամբողջ քառորդ դար մը կռիւ մղած, ապրած ու դեռ չը յոգնած իր ընտիր զաւկին, ինչպէս է Տիար Մկրտիչ Փօրթուգալեանը, որուն աշխատան մօրուքին տակ ծածկուած անթարչաս դէմքը՝ վերջին քառորդ դարուն ազգ. յեղափոխական կեանքին մէջ երեցած անարատ, անկեղծ ու պատկառելի դէմքերէն մին է:

Եգիպտահայը բան մը թող չը նուիրէ հայրենիքին համակրելի գործիչին. թող միայն քաջալերէ անոր գործը, որ է «Արմէնիա»ն:

— ՀԱՄԱՅՆՈՒԿԸ. Երուսաղէմէն 16 Հոկտ. թուականով հեռագիր մը Գաղաթի մէջ համաճարակին մուտքը պաշտօնապէս կը հաստատէ. օրը 30 - 40 մարդ կը մեռնի: Գօլէրան արագ արագ կը տարածուի հիւսիսային կողմը դէպ ի Յոպպէ:

Իսկ Եգիպտոսը կը յուսանք թէ մինչև ամազուրխ մաքրուած կ'ըլլայ համաճարակէն: Այս շաբթուան մէջ, միայն օր մը 19 դէպք պատահեցաւ, այնուհետև զգալի կերպով պակսելու սկսաւ բռնուածներու թիւը, որ օրական 5 կամ 4 ը չ'անցնիր. Գահիրէ բոլորովին մաքրուեցաւ: Բովանդակ Եգիպտոսի մէջ համաճարակէն բռնուածները 100ը չ'են հասնիր և այս վերջին օրերս աւելի կը քիչնան:

— ՎԵՐԱԴԱՐՁՆԵՐ.

— Ն. Բ. ԽՏԻՎԸ Կ. Պոլսէն, Մահրուսայ շոգենաւով ամսոյս 15ին քաղաքս հասաւ: Ամբողջ օրը քաղաքնիս դրօշազարդուած մնաց, բոլոր Նախարարները Գահիրէէն վար իջան այս առիթով:

— ՏԻԿԻՆ ԵՐԱՆՈՒՀԻ Ա. ԲԱՐՔՈՂ ՊէՅ ամսոյս 16 ին հինգշաբթի օրուան ռուսականով Կ. Պոլսէն վերադարձաւ քաղաքս:

— ՄԻՀՐԱՆ ԽԱՆ ԳԱԼՖԱՅԵԱՆ ամ-

սոյս 14 ին երեքշաբթի օրուան Ֆրանսականով ժամանեց: Նորին Վսեմութիւնը այս տարի Եւրոպայի շուրերն անցուց ամառնային օդափոխութեան եղանակը:

Աշնան կէսը հասած ենք ու մեկնողներուն մեծ մասը վերադարձած է արդէն: Մեզի համար կարևոր է գիտնալ վերադարձը Վսեմ. Պօլոս Բաշային: Զրոյց կայ թէ Նորին Վսեմութիւնը պիտի յսկայիս անգամ մը վերադառնայ հոս, տապալելու իր ստեղծած ներկայ Խնամակալութիւնն ու վերստեղծելու համար նոր մը, որուն բաղադրութեանը մէջ ոչ միայն էքիզլէր—Սուլթանի, այլ և Բարթող Պէյն ալ չը գտնուին: Բն այս կարծիքը ոչ նուազ հաւանական կը թուի ոմանց և նոյնիսկ ճշմարտամտ:

Սահմանագրական ընտրութեանց յաջորդ օրը, Խարհուրդէն դուրս նետելու համար էքիզլէրը, ինք Բաշան հրատարեցաւ ու իրեն հետ հրատարեցուց թաղականներուն մեծագոյն մասը. յետո՛յ, յաջոյնցաւ հասնիլ նպատակին, առանց էքիզլէր—Սուլթանի Խնամակալութիւն մը պարգևելով իր հիացողներուն: Իսկ հիմայ, որչափ որ գիտենք, առենէ մ'ի վեր տեսնելով Վսեմ. Ս. Բարթող Պէյի անշահախընդիր գործունէութիւնն, ու անոր գեղեցիկ արգիւնքները, տեսնելով որ Վսեմ. Պէյը կարող կըլլայ յուսացուածէն քիչ մ'աւելի ձեռնահասութեամբ վարել տեղիս սպգային գործերը, իմանալով եկեղեցիին գեղապարգումը, Երկ. Վարժարանին պաշտօնէից գրեթէ մեծ մասին փոփոխուիլը, վերջապէս, ա՛լ հոտն առած ըլլալով անձուսի 64 յարկենի վիթխարի շէնքին շուրջը դարձող գեթոհոլութեանց, Վսեմ. Պօլոս Բաշան հրատարեցաւ, որպէս զի այս անգամ ալ իր Փոխանորդը, Վսեմ. Բարթող Պէյը դուրս նետել տայ:

Տեսնենք պիտի կրնա՞յ. չ'ենք կ'ործեր ու չ'ենք ալ կրնար կարծել. որովհետեւ մօտէն, շա՛տ մօտէն սերտուած ու հաստատուածէ Վսեմ. Բարթող Պէյին ժողովրդականութիւնը:

Իսկ «դաւեր»ուն հեղինակ պարոնը — որ ինք է արդէն հեղինակն անըստորագիր նամակներուն ալ, որոնց գէթ մէկ հատին փորձը կայ — թող լաւ գիտնայ թէ չկրնար իր գաւերով վարկաբեկ ընել ժողովուրդին իրաւունքներն ու սպգ. օրէնքը պաշտպանողները. անոնք, սահմանադրականները չ'են շեղած իրենց սկզբունքէն. նախ բողոք, յետոյ միթիւնկ ու առենէ մ'ի վեր սպասում: Բարձրագոյն իշխանութեան, Պատրիարքարանի պատասխանէն կախում ունի անոնց բռնելիք ընթացքը.

— ՏՕԳԹ. ՍՍՐԳԻՍ Բ. ԺԱՄԿՈՉԵԱՆ վերջերս Ամերիկայէն վերադարձած, հաստատուած է քաղաքիս Սեսուիթրիս փողոցը, թիւ 1, «Ըար ս'Սյեֆտանսրի» տպարանին վրայի յարկը: Փափագողներուն կը յանձնարաշենք ուշադրութեամբ կարգալ նոյն բժիշկին ազդը Փիւնիկի վերջին էջը:

Մեր անկեղծ խնդակցութիւնները: — ՏԵՂԻՍ ՊՕՂՈՍԵԱՆ ԱԶԴ. ԵՐԿ. ՎՍՐԺԱՐՍՆԻՆ առաջին ուսուցչուհի կարգուեցաւ ՕՐ. ՄՍՈՒ ՊԵՅԼԵՐԵԱՆ, Արտեմիսի Տնօրէն—Խճապիւրը.

Մեր սրտագին ինդակցութիւնները յայտնելով մեր անհիւ պաշտօնակցին, իր այս նախապաշտօնին առիթովը, կը յետհաւարենք նաև Պատ. Հոգաբարձութիւնն այսօրս յարմար ընտրութեան մը համար:

Ինչպէս որ նախընթաց թիւով ծանուցուած էր, Երկ. Վարժարանը բացուեցաւ երէկ Երկուշաբթի 20 ին:

— ՏԻԳՐՍՆ ԵՐԿԱԹԻՆ եղբայրը Տիար Մարտիրոս Պիղեգիսի, որ 4 ամիս արձակուրդով Յունաստան էր, քաղաքս վերադարձաւ: Հետևաբար, այսուհետև

պիտի վերսկսինք հրատաշակել Տիգրանի
Երկաթի ընդհատուած կենսագրու-
թիւնը, որ կը սպասուի մեր Պատ. Ըն-
թերցողներուն շատերէն:

Իսկ ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹ ՄԻՈՒԹԻԻՆԻ
Պատ. Վարչութիւնը յոյս կուսայ բազ-
մապատկելու ընկերակից բաժանորդ-
ներուն թիւը, ու երբ յաջողի գոյա-
ցընել պահանջուած գրամագլուխը,
պիտի փութայ բանալ իր ժողովրդային
Հասարան-Ընթերցատունը, որուն համար
այժմէն սկսած է փնտռել յարմարա-
գոյն տեղ մը, քաղքիս կեդրոնին մէջ
կամ քովերը:

Տեղիս ընթերցասէր հասարակու-
թեան մէն մի անդամի պարտքն է,
առանց վարանելու, բաժանորդադըր-
ուիլ այս նորակազմ Միութեան, որ
զուտ ժողովրդային է ու կը կրէ անունը
ժողովուրդին ու Հայրենիքին Զուկին:

— Խնդակցութիւն. Տիար Գառ-
նիկ Սէլվաճեանի ընդ Օր. Արաքսի Ս.
Աբրահամեանի ամուսնութիւնը կա-
տարուեցաւ անցած երկուշաբթի ամ-
սոյս 13ին:

Մեր անկեղծ խնդակցութիւնները
նորապսակ Զոյգին որ կը պատկանին
մեր մէջ յարգուած ու սիրուած երկու
գերգաստաններու:

— ՀԱՅ ՆՈՒԱԳԱՆՈՒՄԲ ԻՆ Վարչու-
թիւնն իր գումարած մասնաւոր նիս-
տին մէջ Ազնուափայլ Տիկին Երանուհի
Ա. Բարթոլոմէյի — որուն երախտապարտ
է Խումբը — Կ. Պոլսէն վերագարծը
չնորհաւորեց և իր խնդակցութիւններն
անցուց ատենագրութեան մէջ:

— ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ՄԸ. Երջանկայի-
շատակ Ներսէս Վարժապետեան Պատ-
րիարքին եղբայրը Տիար Մկրտիչ Վար-
ժապետեան կը յաջողի վերջապէս ան-
ցած կիրակի, Ս. Պօղոս Պետրոսի մէջ
մասնաւոր պատարագ մը մատուցանել
տալ իր անմահ եղբորը հոգւոյն հա-
մար: Գեր. Ս. Բարթոլոմէյոս Ե. Վ.
Թագաճեան էր պատարագելը. Հոգե-

հանդիստին ծախքը սակարկած է մեր
Սրբ. Առաջնորդը, 10 ուլ սկսած ու 2
ոսկիով վերջացուցած: Արարողութիւնն
անցած է լուռ ու մուռ. Սրբ. Առաջ-
նորդնիս քարոզ մը խօսած է, բազ-
դատելով Վարժապետեանն ու Խրիմ-
եանը. առաջինն իբրև գրչի, իսկ երկ-
րորդը սուրբ մարդ ներկայացնելով:

Ո՛վ դարեր, ո՛վ բարքեր...:

ԼՍԱՐԱՆ — ԸՆԹԵՐԿՍԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՆԴԷՍԸ

Գահիրե 15 Հոկտեմ. 1902

Լսարան — Ընթերցատունը կամաց
կամաց իր բուն գերին մէջ մտնելու յոյս
մը կը ներշնչէ. քիչ թէ շատ մշակուած
երիտասարդներ, իրենց բեմբախօսու-
թիւններով հանրութեան ուշադրու-
թիւնը գէպի այդ կարևոր հիմնար-
կութիւնը կը հրաւիրեն: Սեպտեմբեր
21ին առաջին օրինակը տուին Պ. Պ.
Թումանեան և ձիզմէճեան, առաջինը
իր «Զեմֆի Փառֆ»-ովը, իսկ երկրորդը
իր «Ինչո՞ւ ես մնացած եմֆ»-ովը:

Պ. Թումանեան իր բանախօսու-
թեան ընթացքին մէջ թէև քիչ մը
աւելի գեղերեցաւ այս ու այն կողմ,
բայց ըստ կարելոյն լաւ կերպով տրա-
մաբանեց Զէնքի պիտանի գերը, ըսեմ
նոյն իսկ անհրաժեշտութիւնը, թէ՛
անձնապաշտպանութեան և թէ՛ ազա-
տագրութեան բուն պայքարին մէջ,
նա չ՛մոռցաւ թեթև ապտակ մ՛ալ
բաժին հանել այն կարգի ազգասէր-
ներին, որոնք Զէնքի Փառքը իրենց
միայն արժանի կը համարին, առանց
անոչ ահարկու թնդիւնին հանդիպե-
լու: Պ. Թումանեանի բովանդակ նիւ-
թը հատուածական ու քիչ մ՛ալ Աստ-
ուածաշունչեան ոճով գրուած էր,
բայց իր գեղեցիկ շեշտերը և բոլոր-
վին բնական դարձուած քները կատար-
եալ երաշխիք մը կրնային համարուիլ
իր անխառն զգացումներին, որոնք ա-

ւելի ևս տպաւորիչ պիտի լինէին, եթէ Պ. Թումանեան գպրոցականի մը փութկոտութիւնը չունենար արտասանութեան պահուն:

Պ. Ճիզմէճեանի բանախօսութիւնը, «Ժողովրդի նուիրական դրամով հիմնուած, ներկայիս ալ բազմանուն մարդուկի մը սեպհականութիւն դարձած» տպարանին մէջ ամբողջութեամբ ըյս տեսած լինելուն, այլևս աւելորդ կը լինէր հոս մէջտեղ բերել անոր մանրամասնութիւնը, ի միջի այլոց արժէ միայն յիշել թէ՛ Պ. բանախօսը երկա՛ր ու տաղտկալի յառաջաբանէ մը յետոյ, խիստ տկար ու գրեթէ հակատրամաբանական փաստերով շանաց ապացուցել թէ՛ Հայուն յետամնացութեան պատճառը՝ արդիւնք է իր անհնազանդութեան և յամառ եսասիրութեան: Քննեց կրթական հիմնարկութեանց և ինքնազարգացման համեմատական արդիւնքը, ու վերջինը աւելի օգտակար և անհրաժեշտ գտաւ: Խորին համոզմամբ հերքեց «տրամաբանութեան» գեղեցիկ կանոնը, պատճառ բերելով թէ՛ «պատմութիւնները աւելի կ'ազդեն մտքերու վրայ, քան տրամաբանութիւնը», — անշուշտ Պ. բանախօսը մոռցած լինելու է թէ իր ակնարկած ամենաազդեցիկ և տրպաւորիչ պատմութիւններն իսկ հիմնուած են առողջ տրամաբանութեան վրայ, ու առանց անոր ապահովաբար ոչինչ արժեն — հուսկ ուրեմն փորձառութեանով մը առաջարկեց հասարակութեան, որ ձգեն իրենց յոռի նկարագիրը, — իր տեսակէտով — կուտուրական սոսկալի անկումէ մը խուսափելու համար:

Պ. Ճիզմէճեանի բանախօսութիւնը թէև օգտակար մտածման վրայ ձեւուած, բայց քիչ մը տրամաբանութենէ զուրկ լինելուն, այնքան ուշագրաւ չ'կարողացաւ լինել, որքան իր յար-

դարուն շարադրութիւնն և պատշաճաւոր շարժումէր:

Կ. Ս.

ՏԻՐԱՅՈՒԻ ՄԸ ՀՍՄԱՐ

«Արշալոյս»ի անտանելի տիրացուն, իր հոգիէն սկրթուած մատ մը լորձունք նետած էր իմ վրաս: Երբէք չէք տեսած անշուշտ սիրելի ընթերցողներ թէ, մարդ մը — խօսքս Եղիշէիպէսներուն համար չէ — իշու մը քովէն անցած ժամանակը էջը իրեն կից մը զարնէ և մարդն ալ փոխարինելու համար դառնալով իշուն կից մը զարնէ: Նոյնպէս ես ալ չ'եմ ուզեր Եղիշէին պատասխանել, այս ամենամեծ պատիւը պիտի ըլլար որ երբէք եղած ըլլայ Եղիշէին — «ամենէն Թորոսեան» — իր երեսուն տարուան թափուր գոյութեանը մէջ: Բայց ես կուզեմ այս տիրացուն անպարկեշտութեան չափը տալ ամէն անոնց, որոնք Եղիշէին ինչ ըլլալը ճանչնալու դժբախտութիւնը չեն ունեցած:

Քանի մը շաբաթ է ի վեր քաղաքէս (Աղէքսանդրիաէն) իմ հասցէիս «Արշալոյս» ըսուած քուրջը կուգար: Ես որ «Արշալոյս» կարդալ չեմ ուզեր, կը փնտռեմ գործակալը և չեմ գտներ, հետեւաբար և կըստիպուիմ, Թորոսեանի հասցէին վերադարձնել, սա շատ քաղաքավարական երկտողը գրելով: «Օ. Թ. իր շնորհակալութիւնը կը յայտնէ Տիար Եղիշէ Թորոսեանին, բայց կը ցաւի որ չի կրնար «Արշալոյս»ը ընդունիլ և կարդալ:

Ասոր կը պատասխանէ սապէս, հայհոյանքներու ամբողջական Եղիշէականով մը:

«Աղէքսանդրիա Օ. Թ. — Մենք

ձեզի «Արչալոյս» զրկելու պատիւը չենք ըրած երբէք և ընելու ալ նրպատակ չ'ունինք: Մենք փորձած ենք որ դուք ո՛ր և է հայ լրագրի իրաւունքը գողացող ճրիասէրներէն էք:

Անգամ մը ևս կը հաստատէք սակայն ձեր ընթացքով թէ՛ դուք պարզ հասցէ մը կարգալ կարենալաւ անգամ ընդունակութիւն չ'ունիք, և մտքով շատ տկար մէկն էք. կը ցաւինք որ ձեր մտքի պաշարաբարձին այդ աստիճան ասկանապետքեան վրայ օ.օ.:

Վա՛յ ձեզմէ առաջնորդուողներու գլխին... գեռ ինչ անհեթեթ փորձանքներու պիտի մատնէք զանոնք ձեր հոչակելի ապշութեամբը...:

Tant pis pour eux ! . . . »

Ո՛հ, սքանչելի հայերէ՛նը . . .

որուն տեղ եթէ իր պատկերը տպէր, ոչ միայն ինծի, այլ մարդկութեան հայհոյած պիտի ըլլար, նախատինքը նետելով միանգամայն բնութեան ճակտին իրեն պէս աղբակոյտ մը արտադրած ըլլալուն ամենէն պայծառ և շօշափելի ապացոյցը պարզելով մեր աչքերուն առջև:

Գիտեմ որ իմ այս անախորժ խօսքերս, եղիչէի խարխուռ մարմինին մէջ պահուած, ճզղած, ճմռթկած, ծթոած հոգին հրահրելով, առաւօտը մթնշաղին պիտի վազցնեն զինքը իր գրասենեակը, ուր ապակիացած աչքերը ոլորտապտոյտ խաղացնելով, քանի մը անգամ շրջանը ընելէն, պիտի նստի և իր հոգիին արտադրելիք սեւութիւններովը պիտի շատտէ խեղճ... թուղթը՝ բայց ապահովապէս, իմ ոտքիս տակ իյնալով՝ ճամբաս գոցել ուզող այս անտառացած տղիտութեան մարմնացումը, երբէք քարընդոտ մը չպիտի ըլլայ ինծի, ևս ընդհակառակը կը ներեմ իրեն, քանզի իր ոտքէ ոտք զարնուող տխուր էութիւնը վսեմի հասնող ապուշութեամբը, անհաւատալի տի-

պար մը կընծայէ հոգեբան գրողներու:

Օ. Թ.

ՇՆՈՐ ՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Կուգամ հրապարակային շնորհակալութիւնս յայտնել մերազնեայ յայտնի մանկաբարձ Տիկին Իսկուհի Շիրինեանի, որ, արուեստին բոլոր հմուտութիւնն ու փորձառութիւնն ի գործ դնելով, մահուանէ ազատեց կինս, աշխարհ բերելով եօթնամսու զաւակ մը, թէ և մեռած:

Լեւոն Սարգիսեան

ՏՐ . ՍԱՐԳԻՍ Բ. ԺԱՄԿՈՉԵԱՆ

Ամերիկեան վկայեալ բժիշկ

Սեսուսրիս փողոց թիւ 1

«Փար ս'Աշէֆսսէսրի»ի սպարանիին վրայ ի Ա. յարկը

Տօգթէօր Սարգիս Բ. Ժամկոչեան պատիւ ունի ծանուցանել Տեղիս արգոյ հասարակութեան թէ՛ ինք հաստատուած է վերջնապէս քաղաքիս մէջ ու պատրաստ է դարմանելու ընդհանուր հիւանդութիւններ: Մասնագիտօրէն ու Ամերիկայի կատարելագործուած ու նորագոյն բժշկական փորձերով ու սխաղէմով կը բուժէ մանաւանդ արեան վերաբերեալ զանազան ախտերը:

Հիւանդները կ'ընդունի ամեն օր կէս օրէն ետքը ժամը 2-5: Իսկ 2օրեքշաբթի և Շաբաթ օրերը առտուան ժամը 9-11 ձրիաբար կը դարմանէ իրեն գիմող ազբատ հիւանդները:

— Տխար Մ. Նաչպանեսեան Զուգերիոյ Լօզան ուսումնասէր քաղքին մէջ վերջերս հաստատած է Արեւելեան Գիշերօթիկ Կրթասուն մը, որուն ստացած ենք Մրագիր—Պայմանագիրը:

Դատելով ծրագրէն և մանաւանդ Պատ. Հիմնադրին ձեռնհասութենէն, կը սիրենք յուսալ թէ այս նոր հայկական հաստատութենէն պիտի մեծապէս օգտուին հայ ծնողներէն անոնք որ կը փափագին Եւրոպայի այդ գեղեցիկ մասին մէջ կրթել տալ իրենց զաւակները: Յաջորդ թիւին մէջ պիտի հրատարակենք սոյն կրթական հաստատութեան սղգարարութիւնը:

— Գահիրէէն թղթակցութիւն մը ստացանք, բայց տեղին անձկութեանը պատճառով յաջորդին յետաձգեցինք անոր հրատարակութիւնը:



Երբտասարգ մը, որ քաջ Անգլիագէտ է, պատրաստ է մասնաւոր դասեր տալ անգլերէնի, տուներու մէջ ալ, խիստ գահացուցիչ եւ դիւրամատչելի պայմաններով:

Փափագողները դիմեն Փիւնիկի խմբագրութեան:

« ԱՐԱՔՍ »

Հայկական տպարանը թէ՛ հայերէն, թէ՛ գաղղիերէն և թէ՛ ուրիշ լեզուներով ամեն տեսակ տպագրական գործեր կը կատարէ մեծ խնամով եւ, ինչ որ նուազ կարեւոր չէ, ԽԻՍ ՉԱՓԱՒՈՐ ԳԻՆԵՐՈՎ:

SALAMANDER

ՍԱԼԱՄԱՆՏԵՐ

Ապահովագրական Ընկերութիւն ընդգէմ հրդեհի.

ԱՄՍԹԵՐՏԱՄ

Դրամագլուխ 3,125,000 ֆրանգ

Ամեն կերպ Ապահովագրութիւնք կ'ընդունուին ընդգէմ հրդեհի ինչպէս նաև Ծովային, Գետային և Ցամաքային փոխադրութեանց արկածներու դէմ:

Դիւրամատչելի զներ և պայմաններ

Դիմել առ Ընդհանուր Դորձակաչ եւ Լիագոր-Փոխանորդ

ՄԻՀՐԱՆ ԳԱԼՅԱՆՍ

Աղեփասանորիա, պզտիկ Մեկնչիէ Ապուսսուս փողոց թիւ 10

L'ALLIANCE

Լ'ԱԼԻԱՆՍ

Ծովային Ապահովագրական Ընկերութիւն.

ՊԵՐԼԻՆ

Դրամագլուխ 5,000,000 ֆրանգ